

Տ. Ռակի Վրդ. Որդիքեան
1925-2006

digitised by A.R.A.R.@

ՀԱՆԳԻՍՏ ՀՈԳԵ. Տ. ՈՍԿԻ ՎՐԴ. ՈՐԴԻՔԵԱՆԻ

2006 թուականի Դեկտեմբերի 11-ին՝ երկուշաբթի օրը, կարճատեւ հիւանդութիւնից յետոյ Երուսաղէմի ֆրանսիական հիւանդանոցում իր մահկանացուն կնքեց Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Միաբանութեան երկարամեայ միաբան Հոգշ. Տ. Ոսկի Վրդ. Որդիքեանը:

Հանգուցեալ Հայր Սուրբի Տան Կարգը կատարուեց դեկտեմբերի 13-ին՝ չորեքշաբթի օրը, Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարում՝ Պատրիարք Սրբազան Հօր հանդիսապետութեամբ: Վերջին Օծումը կատարուեց յաջորդ օրը՝ դեկտեմբերի 14-ին, նոյն եկեղեցում, հանդիսապետութեամբ Լուսարարապետ Գերշ. Տ. Նուրհան Արքեպս. Մանուկեանի եւ մասնակցութեամբ միաբանութեան բոլոր անդամների:

Հայր Սուրբի մարմինը ամփոփուեց Սիոն լեռան վրայ գտնուող Սուրբ Փրկիչ Ազգային գերեզմանատան միաբան հայրերին յատկացուած բաժնում:

Ստորեւ ներկայացնում ենք հանգուցեալ Հայր Սուրբի ամփոփ կենսագրութիւնը.

* * *

Հոգշ. Տ. Ոսկի Վրդ. Որդիքեանը (աւազանի անունը Ստեփան) ծնուել է 1925 թուականին՝ Թուրքիայի Իսթանպուլ քաղաքում:

1975 թուականին գալով Երուսաղէմ՝ վանական իշխանութեան կողմից ընդունուել է իբրեւ աշխատաւոր միաբան: Յաջորդ երկու տարիներին նա իր ծառայութիւնն է բերել Սուրբ տեղեաց մէջ կատարուող եկեղեցական արարողութիւններին:

1977 թուականին՝ Հոկտեմբերի 1-ին, ձեռամբ օրուայ Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս. Ազանեանի նախ ձեռնադրուել է սարկաւագ, իսկ Հոկտեմբերի 2-ին՝ Կուսակրօն Քահանայ:

1982 թուականին Հայր Սուրբը նշանակուել է Եաֆա եւ Հայֆա քաղաքների Հոգեւոր Հովիւ:

1987 թուականին Հայր Սուրբը նշանակուել է Բեթղեհէմի Ծննդեան Սուրբ Տաճարի հայոց վանքի տեսուչ:

1999 թուականին, ուղեղի արիւնազեղման հետեւանքով Հայր Սուրբը անդամալուծուել էր եւ կորցրել խօսելու իր կարողութիւնը: Կեանքի իր մնացած օրերը Հայր Սուրբը անցկացրեց Երուսաղէմում գտնուող մայրապետների Ապարէի ծերանոցում:

Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի.

digitised by A.R.A.R.@